«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՄԵԶՐԵՈՒՄ (1897–1908 թթ.)

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

XIX դ. վերջերին Գերմանիայում, որպես համիդյան ջարդերի հետևանք, սկիզբ է առնում հայանպաստ շարժում, որի հիմնական շարժիչ ուժը եկեղեցական շրջանակներն էին ու նրանց հարող մամուլը: Ամերիկյան մի թերթից տեղեկանալով Թուրքիայում սուլթան Աբդուլ Համիդի հրամանով հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված բռնությունների ու արյունահեղությունների մասին՝ Մայնի Ֆրանկֆուրտի Քրիստոսի եկեղեցու քահանա Է. Լոհմանը փորձում է այդ իրադարձությունների վերաբերյալ ավելի հանգամանալից տեղեկություններ գտնել գերմանական մամուլում, սակայն՝ ապարդյուն. գերմանական մամուլը, ընդհանրապես, լռում էր այդ մասին[1]: «Ես եղա տարբեր ատյաններում՝ ճշմարտությունը հետազոտելու նպատակով, սակայն ոչ մի պատասխան չստացա,– գրում է նա:– Կարծես թե Գերմանիայում մարդիկ դրա մասին ոչինչ չգիտեին: Ողջ մամուլը լռում էր»[2]: Հետագայում Լոհմանը պնդում էր, որ գերմանական մամուլն այդ լռության դիմաց Կոստանդնուպոլսի կողմից հսկայական գումարներով կաշառվել էր[3]: Այս համատարած լռությունը խախտելու և Օսմանյան կայսրությունում իրականացվող կոտորածներից տուժած հայ ազգաբնակչությանն օգնելու նպատակով 1896 թ. փետրվարի 2-ին Է. Լոհմանը հրապարակում է առաջին թռուցիկը՝ հայերին նյութական հանգանակություններով օժանդակելու կոչը: Այս կոչն անսպասելի լայն արձագանք է ստանում. ստացվում են զգալի նվիրատվություններ, որոնք էլ ուղղվում են համիդյան կոտորածներից տուժած հայերին օգնելուն: Բացի այդ, Լոհմանի կոչին արձագանքում են նաև հայտնի անհատներ, որոնց թվում՝ Յոհաննես Լեփսիուսը: Այսպես սկիզբ է առնում Լոհմանի և Լեփսիուսի հետագա համագործակցությունը: Թուրքիայից ստացվող հակասական տեղեկատվության ճշմարտացիությունն ստուգելու նպատակով՝ Լեփսիուսը 1896 թ. մայիսին մեկնում է Օսմանյան կայսրություն: Հունիսին վերադառնալով՝ զեկուցում է կարդում կայսրությունում տիրող իրական վիճակի մասին, միաժամանակ կոչ անելով Լոհմանին Ֆրանկֆուրտում կազմակերպելու շահագրգռված անձանց հանդիպում՝ սկսված օգնության աշխատանքները պաշտոնական շրջանակների մեջ դնելու և հետագա նախաձեռնությունները

---

[1] T. B r a n d t. Ernst Lohmann. Ein Pionier im Jesu Dienst. Gießen, 1962, S. 41.

[2] A. B a u m a n n. Die Gründung des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient; in Ernst Lohmann 1860–1936. Pioner, Gründer, Evangelist. Martin Knipsel (Hrsg.), Berlin, 2011, S. 49–50:

[3] *Նույն տեղում, էջ 50:*

համաձայնեցնելու համար[4]: Եվ հենց այդ նպատակով էլ 1896 թ. հուլիսի 2-ին շահագրգիռ անձանց մասնակցությամբ հրավիրվում է համաժողով և հիմք է դրվում «Հայաստանի օգնության գերմանական միությանը» (այսուհետև՝ ՀՕԳՄ): Թեև ՀՕԳՄ-ի պաշտոնական հիմնադրումը տեղի է ունենում կազմակերպության առաջին համաժողովի ժամանակ, սակայն հայերին բողոքական Գերմանիայի օգնությունը սկիզբ է առնում այս թռուցիկի լույս տեսնելու օրվանից[5]:

Սկզբնական շրջանում կազմակերպությունը բաղկացած էր Մայնի Ֆրանկֆուրտի (նախագահ՝ Էռնստ Լոհման) և Բեռլինի (քարտուղար՝ Յոհ. Լեփսիուս) հիմնական կոմիտեներից ու Էլզասի (քարտուղար՝ քահանա Հոֆետ), Նասաուի (նախագահ՝ քահանա Կալդենբախ), Հեսենի (նախագահ՝ դր. Լինս), Օսթֆրիսլանդի (նախագահ՝ դր. Շոմերուս), Հինթերպրոմերնի (նախագահ՝ քահանա Շվարտց) և Յուրիխի (նախագահ՝ պրոֆեսոր Գոդետ) ենթակոմիտեներից[6], որոնց օգնությամբ էլ իրականացվում էին հանգանակությունները, տեղեկատվության ու կոչերի տարածումը: Արդեն 1896 թ. օգոստոսի 28-ին Մայնի Ֆրանկֆուրտում տեղի է ունենում ՀՕԳՄ-ի երկրորդ համաժողովը, որի ժամանակ որոշում է կայացվում չորս հարյուր որբ հավաքել և խնամել Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում, մասնավորապես՝ Խարբերդում, Մարաշում, Վանում և Կոստանդնուպոլսի Սկյուտարի թաղամասում[7]:

Սակայն շուտով Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեների ճանապարհները բաժանվում են: Պատճառը 1896 թ. սեպտեմբերի 24-ին բեռլինյան մի սրահում ՀՕԳՄ-ի կողմից կազմակերպված երկու հավաքույթներն էին, որոնք պետական ու գիտական, ինչպես նաև եկեղեցական շրջանակների կողմից անվայել որակվեցին: Լեփսիուսը, որպես դրանց համակազմակերպիչ, ՀՕԳՄ-ի անդամների մի մասի համար հանդես էր գալիս որպես գերմանա-օսմանյան հարաբերությունների անդորրությունը խանգարող, մյուսների համար՝ չափից շատ քաղաքականացված հոգևոր հովիվ: Դրանից հետո գերմանական գործունեությունը հայերի շրջանում ընթանում է երկու բաժանված կազմակերպություններով[8]:

ՀՕԳՄ-ի Ֆրանկֆուրտի կոմիտեն ձևավորվում է որպես առանձին կազմակերպություն, որը հետայսու հանդես է գալիս որպես «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միություն»: 1897 թ. հունվարի 13–14-ին Բարմենում տեղի ունեցած դեռևս չտրոհված ՀՕԳՄ-ի կոնֆերանսի ժամանակ միսիոներական գործունեության շրջանները բաժանվում են երկու կոմիտեների միջև. Խարբերդի շրջանն անցնում է ՀՕԳՄ-ի Ֆրանկֆուրտյան կոմիտեին (այսուհետ՝ Օգնության միություն), իսկ Հալեպի շրջանը Ուրֆայի հետ անցնում է Բեռլինի կոմիտեին[9]:

---

[4] A. B a u m a n n. *Նշվ. աշխ., էջ* 52 – 53:

[5] *Նույն տեղում, էջ 72:*

[6] B. B l a s e r. Pastor Enst Lohmann und der Christliche Hilfsbund im Orient. Bad Homburg, 2009, S. 31.

[7] A. B a u m a n n. *Նշվ. աշխ.,* էջ 54:

[8] H a n s - L u k a s K i e s er. Der verpasste Friede. Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Türkei, 1839–1938. Zürich, 2000, S. 160.

[9] *Նույն տեղում, էջ* 60:

Որպես ՀՕԳՄ-ի առաջին ներկայացուցիչներ՝ ուսուցիչ Յոհաննես Էիմանը, բժիշկ դր. Հեռլեն և գյուղատնտես դր. Մաքս Ցիմերը 1896 թ. նոյեմբերի 20-ին մեկնում են Թուրքիա: Կ. Պոլսում նրանց ընդունում է ՀՕԳՄ-ի հանձնարարությամբ այստեղ գտնվող և Սկյուտարի որբանոցի ղեկավարումը ստանձնած իշխանուհի Գրյոբենը, ով, կազմակերպության հետ պայմանավորվածության արդյունքում, արդեն իսկ Բեբեքում ձեռք էր բերել մի շենք և այն դարձրել աղջիկների որբանոց: Գործունեության վայրի ընտրության կապակցությամբ հրավիրված խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էր Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի (այսուհետ՝ ՕԱԼԱԽ) գործադիր տնօրեն Ու. Փիթը, որոշվում է ընտրել Խարբերդը, որտեղ հայ քրիստոնյաների վիճակը շատ ծանր էր[10]: Բացի այդ էլ, դեռևս 1896 թ. նոյեմբերի 2–3-ին Մայնի Ֆրանկֆուրտում տեղի ունեցած կազմակերպության երրորդ համաժողովի ժամանակ որոշվել էր աշխատանքը կենտրոնացնել Խարբերդի վիլայեթում[11]:

1896 թ. դեկտեմբերին կամ 1897 թ. հունվարին Էիմանը, դր. Հեռլեն և դր. Ցիմերը Կ. Պոլսի Գերմանիայի դեսպանատանը հանդիպում են դեսպան Զաուրմա ֆոն դեր Յելչի հետ և նրան տեղեկացնում երկրի արևելյան նահանգներ կատարելիք իրենց ճանապարհորդության ու ծրագրերի մասին: Վերջինս նկատում է, որ, ելնելով Օսմանյան կայսրության գավառներում տիրող անվստահելի իրավիճակից, իրենք չեն կարողանա ապահովել նրանց անվտանգությունը՝ միաժամանակ այդ ձեռնարկն համարելով անիմաստ: Պատվիրակությունը ստիպված է լինում հայտարարելու, որ հրաժարվում է գերմանական իշխանությունների որևէ աջակցությունից[12]: 1897 թ. փետրվարի 20-ին Էիմանը, դր. Հեռլեն և դր. Ցիմերը ժամանում են Խարբերդ[13]: Ուսուցիչ Էիմանը մնում է Խարբերդում, դր. Հեռլեն մեկնում է Մալաթիա, դր. Ցիմերը՝ Տիգրիսի շրջան, Բալու և այլն[14]: Էիմանը գրում է, որ, ի սկզբանե, իրենք մտածում էին որբախնամ աշխատանքի կենտրոն դարձնել ինչպես Մալաթիան՝ որպես գեղեցիկ շրջակայքով և ջրառատ այգիների քաղաք, այնպես էլ Բալուի բերքառատ հարթավայրում՝ մի գեղեցիկ բլրի գագաթին գտնվող հին հայկական ամրոց Հավասը[15]: Ի

---

[10] *Բ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. Պատմություն Մամուրեթ ուլ Ազիզի Գերման Որբանոցներու, Պեյրութ, 1973, էջ 22:*

[11] B. B l a s e r. *Նշվ. աշխ., էջ 30:*

[12] J. E h m a n n, Führungen Gottes in 25jähriger Orientarbeit (Mezereh); in 25 Jahre im Orient: 1896–1921. Ein Gang durch die Arbeit des Deutschen Hülfsbundes für Christliches Liebeswerk im Orient. Schuchardt F. (Hrsg.). Frankfurt a. M., 1921, S. 2, 8.

[13] Zur Geschichte des “Deutschen und Schweizer Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient”. Teil II, S. 277. *Տե՛ս նաև՝ Շահարկեցեք, մինչև գամ: 1896–1996 թթ. Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության հարյուրամյակը: Բաղ Հոմբուրգ, 1996, էջ 9:*

[14] *Բ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 22: Է. Լոհմանն փոքր-ինչ այլ կերպ է շարադրում վերոհիշյալ վայրեր կատարած այցելությունները: Ըստ նրա՝ դր. Հեռլեն գնում է Բալուի շրջան և Մալաթիա, դր. Ցիմերը՝ Տիգրիսի վերին շրջանը, իսկ ինքը՝ Խարբերդից դեպի Եփրատի ձախակողմյան շրջանը. տե՛ս* J. E h m a n n. *Նշվ. աշխ., էջ 10:*

[15] *1880-ական թվականներին ստեղծվում է Խարբերդի նահանգը և Դիարբեքիրի նահանգին են անցնում Բալուի, Արղնամադենի, Արգնիի, Ջերմուկի, Չնքուշի և Սևերեկի գավառակները: Մինչ առանձին նահանգ լինելը՝ Խարբերդի նահանգի տարածքը, որը XX դ. սկզբին զբաղեցնում էր 32.900 կմ² տարածք, եղել էր նախ Սեբաստիայի, ապա Դիարբեքիրի նահանգի մեջ: Տե՛ս Թ. Հ ա կ ո բ յ ա ն. և այլք. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: 4 հատորով, հ. 2, Երևան, 1991, էջ 701:*

վերջո, որպես առաքելության գործունեության հիմնական կենտրոն, ընտրվում է Մեզրեն:

Մեզրե քաղաքը, որն անվանվում էր նաև Մեզիրե, Նոր Խարբերդ, Մամուրեթ-ուլ-Ազիզ և այլն, գտնվում էր Խարբերդ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք և 1878 թ. ի վեր Խարբերդի նահանգի վարչական կենտրոնն էր: Հ. Հյուբշմանը Մեզրե անունը կապում է հին Մաղարա անվան հետ, իսկ Ն. Ադոնցը գտնում է, որ այն ծագել է արաբերեն «մեզրե» («արտ») բառից: Մեզրեն 1617 թ. հիմնադրել են Խարբերդից փոխադրված հայերը և այն անվանել են Նոր Խարբերդ: 1834 թ. Աբդուլ Ազիզի սուլթանության ժամանակ քաղաքը վերանվանվել է Մամուրեթ-ուլ-Ազիզ: 1914 թ. տվյալներով Մեզրեն ուներ 16 000 բնակիչ, որի կեսը հայեր էին: Իսկ Մեզրեի արվարձաններում՝ Քեսիրիկում, Եղեգիում և Սյուրսյուրուում բնակվում էր 9546 մարդ, որից 7620-ը հայեր, 1926-ը՝ թուրքեր[16]: Մեզրեում 1897 թ. գարնանը ամերիկացի միսիոներների օգնությամբ ՀՕԳՄ-ի Ֆրանկֆուրտի կոմիտեն երկու շենք է վարձակալում: 1897 թ. հունիսի 1-ը համարվում է Մեզրեում միսիոներական աշխատանքների սկզբնակետը, քանի որ այդ օրն է սկսվում իրականացվել Խարբերդում մինչ այդ հավաքված որբերի տեղափոխությունը Մեզրեի այս նոր որբանոցները[17]:

Արդեն 1898 թ. աշնանը Մեզրեի կայանում տանիք էր գտել 280 երեխա, գործում էին արհեստանոցներ, պոլիկլինիկա և դեղատուն: Այս կայանի մեջ էին մտնում նաև մոտակա Հյուսենիկ և Փերչենճ գյուղերի ենթակայանները: Փերչենճի ենթակայանում կար 40 որբ, գործում էր այրիանոց, իսկ Հյուսենիկում՝ 20 երեխա: Մեզրեում էին աշխատում կայանի հիմնադիր, ուսուցիչ Յո. Էհմանը և կինը՝ Հելենե Էհմանը, ուսուցիչ Վ. Յակոբսը, օրիորդներ Յուլի Անդերսենը, Լաուրա Մյոհրինգը, Մատիլդե Ռիֆկոհլը: Արհեստանոցները ղեկավարում էր հյուսն Աուգուստ Շյուտցը[18]: Որբախնամ աշխատանքներին ծառայում էր 9 տուն: Կայանում և ենթակայաններում դարավերջին կար շուրջ 350[19], որոշ տվյալներով՝ 370 երեխա[20]: Պետք է նշել, որ որբերի թվաքանակն անընդմեջ փոփոխվում էր, քանի որ տարատեսակ հիվանդությունների, համաճարակների պատճառով երեխաներ էին մահանում, ոմանք որբանոցում արհեստ սովորելով սեփական գործը հիմնելու կամ ամուսնանալու նպատակով լքում էին որբանոցը՝ նվազեցնելով երեխաների թիվը: Փոխարենը նոր երեխաների մուտքը որբանոց շարունակական բնույթ էր կրում:

Ինչպես մյուս կայաններում, այստեղ ևս ՀՕԳՄ-ը պարտավոր էր շենքերը կառուցել կամ դրանք վարձակալել տեղացիներից: Այստեղ վարձակալվել

---

[16] *Նույն տեղում:*

[17] J. E h m a n n. *Նշվ. աշխ., էջ* 10:

[18] "Vertrauliche Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient". Frankfurt a. M., Heft 1, Oktober, 1898, S. II.

[19] "Vertrauliche Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient". Frankfurt a. M., Heft 5, März, 1899, S. 41.

[20] O. K ö k e r. Armenians in Turkey 100 Years Ago, with the Postcards from the Collection of Orlando Carlo Calumeno. Istanbul, 2008, p. 298.

են վերապատվելի Պետրոս Կարապետյանի, պատվելի Պաղտասար Ղազարոսյանի, Հաճի Մատթեոսի, պատվելի Գևորգ Պասամյանի և այլոց տները[21]:

Տղաների որբանոցում երեխաները բաժանված էին 25 հոգուց բաղկացած խմբերի, որոնք կոչվում էին «ընտանիքներ»: Յուրաքանչյուր «ընտանիք» ղեկավարվում էր մի հայ աշխատակցուհու կողմից, ով «ընտանիքի» «մայրիկն» էր: Նրանք իրենց աշխատանքի դիմաց վարձատրվում էին: Որբանոցներից բացի, ավագ տարիքի տղաների համար կային կոշկակարության, հյուսնության և դերձակության արհեստանոցներ: Դրանցում ընդհանուր առմամբ ներգրավված էր 45 տղա[22]:

1899 թ. գարնան դրությամբ տղաների մեծ որբանոցում, որը կոչվում էր նաև «Վեստֆալական որբանոց» (քանի որ երեխաների խնամակալությունն իր վրա էր վերցրել ՀՕԳՄ-ի Վեստֆալիայի կոմիտեն) կար 134 երեխա: Որբանոցում աշխատում էին Էհման ամուսիններն ու 5 «մայրիկ»: Նրանց օգնում էին գյուղատնտես Շեհինգը, հյուսն Աուգուստ Շյուտցը, հինգ հայ ուսուցիչ՝ Պետրոսը, Օհաննեսը, Բաղդասարը, Նազարեթը, Հովսեփը և երեք հայ արհեստավոր:

Տղաների որբանոցների շենքային պայմանները բարելավելու նպատակով կառուցվում է որբանոցի մի նոր շենք: 1900 թ. նոյեմբերի 1–2-ին տեղի է ունենում հին որբանոցից տղաների տեղափոխությունը նորակառույց շենք: Այսուհետ այստեղ էին ապրելու 150 երեխա, Էհման ամուսինները, Վերենա Շմիդլին: Որբանոցն ստանում է «Էբեն - Էցեր» (արևմտահայերեն տարբերակում՝ «Աբենեզեր» կամ «Էբենեզեր») անվանումը[23]: Տղաների նորակառույց երկրորդ որբանոցը ղեկավարում էին Գուստավ և Էմմա Պալենտինատները[24]:

Աղջիկները նույնպես բաժանված էին «ընտանիքների», և նրանց հսկողությունը ևս դրված էր «մայրիկների» վրա: Աղջիկների մեծ որբանոցում, որը կոչվում էր նաև «Վյուրտեմբերգական որբանոց» (քանի որ երեխաների խնամակալությունն իր վրա էր վերցրել Վյուրտեմբերգական կոմիտեն), կար 109 աղջիկ: Որբանոցի ղեկավարն էր նախ օրիորդ Մ. Ռիֆկոհլը, ապա Կ. Մադերը:

Եվս 18 տղա և 2 աղջիկ ապրում էին մի այլ որբանոցում, որը ղեկավարում էին Պետրոս Բորիկիանն ու իր կինը:

Մեկ այլ որբանոցում ապրում էր 10 աղջիկ և 3 տղա: Տան կառավարիչն էր Մելքոլմ Ժամկոչն ու նրա կինը: Եվս 50 տղա և 43 աղջիկ օթևան էին գտել Փերչենճի և Հյուսենիկի որբանոցներում[25]:

---

[21] *Բ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 26:*

[22] “Mitteilungen aus dem Orient”. Frankfurt a. M., Heft 7, April, 1903, S. 99–100.

[23] “Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hlfsbund für christl. Liebeswerk im Orient”. Frankfurt a. M., Heft 6, März, 1901, S. 63–65.

[24] *Վ. Հ ա յ կ. Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը: Հուշամատյան ազգային-պատմական-մշակութային և ազգագրական, Նյու Յորք, 1959, էջ 457:*

[25] “Vertrauliche Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient”. Frankfurt a. M., Heft 6, April, 1899, S. II.

Նկատենք, որ աղջիկների որբանոցում գործում էին կարի և մանածագործության արհեստանոցներ, որտեղ աշխատում էր երկու տասնյակից ավելի երեխա[26]:

Մեզրե կայանի հիմնադրումից մի քանի տարի անց բարելավվում են նաև աղջիկների որբանոցային պայմանները, և նրանք տեղափոխվում են երեք նորակառույց կամ նոր վերանորոգված ու ընդարձակված շենքեր: Այսպես՝ Ա որբանոց՝ Պանել (Պնիլ): Այստեղ աշխատում էին Կատհարինե Մադերը և Հանսինե Մարխերը: Բ որբանոց՝ Էլիմ (Եղեմ): Աշխատակցուհիներ՝ Յ. Անդերսեն և Էվա Էլվերս: Գ որբանոց՝ Էմմաուս: Այս վերջին որբանոցը կոչվում էր նաև «սկանդինավյան», քանի որ որբանոցի համար հոգ էր տանում Կոպենհագենում կազմավորված մի «Տիկնանց Միություն»: Սկզբնապես Էմմաուսը ղեկավարում էին Ալմա Յոհանսոնը և Քրիստա Համերը[27], իսկ 1906 թ.՝ Մինա Գրյունհագենն իր դստեր՝ Զիգրիդի հետ[28]:

Կրտսեր տարիքի աղջիկներին դասավանդում էր քույր Յուլի Անդերսենը: Գերմաներենի դասերն անցկացնում էր նախ Հելենե Էհմանը, ապա (վերջինիս խիստ զբաղվածության պատճառով) ուսուցիչ Վ. Յակոբսը: Սկզբնապես որբանոցում աշխատում էին երկու հայ ուսուցչուհի՝ Յեխսան (ղեկավարում էր կիրակնօրյա դպրոցը) և Հայկանուշը[29]: Որբանոցների վերակառուցումից հետո ավելանում է նաև ուսուցչուհիների թիվը՝ հասնելով 5-ի[30]: Կրթության բնագավառում մեծ առաջընթաց է կատարվում 1906 թ., երբ Յո. Էհմանի ջանքերով Մեզրեում բացվում է ուսուցիչների և ուսուցչուհիների սեմինարիան, որը կարճ ժամանակում շուրջ 50 շրջանավարտ է տալիս[31]:

Յուլի Անդերսենի ղեկավարության ներքո Մեզրեի կայանում գործում էր նաև այրիանոց: Այստեղ, սակայն, միայն այրիները չէ, որ ապրում էին: Սկզբնապես տանն ապրում էր 26 հոգի: Կանանցից մի քանիսը կույր էին կամ լավ չէին տեսնում, 1–2-ը մտավոր խնդիրներ ունեին և այլն: Նրանցից շատ քչերն էին կարողանում օգտակար լինել՝ կայանում որոշ աշխատանքներ ստանձնելով՝ լվացք, մանածագործություն, տնային աշխատանքներ և այլն[32]: Ընդհանուր առմամբ՝ այրիների համար Գերմանիայում խնամակալ գտնելը, ով կհոգար տվյալ այրու համար ենթադրվող ծախսերը, ավելի դժվար էր, քանի որ նախապատվությունը հիմնականում տրվում էր երեխաների խնամակալությանը:

---

[26] “Vertrauliche Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient”. Frankfurt a. M., Heft 12, September, 1900, S. 102.

[27] “Mitteilungen aus dem Orient”. Frankfurt a. M., Heft 4, Januar, 1903, S. 60.

[28] *Բ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 162:*

[29] “Vertrauliche Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient”. Frankfurt a. M., Heft 2, November, 1898, S. 11–13.

[30] “Mitteilungen aus dem Orient”. Frankfurt a. M., Heft 3, Dezember, 1902, S. 38–42.

[31] B. B l a s e r. 110 Jahre Deutscher Hilfsbund im Orient: 1896 – Ende 2006, Frankfurt a. M., 2006, S. 5.

[32] “Vertrauliche Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient”. Frankfurt a. M., Heft 5, März, 1899, S. 35–37.

Մեզրեի կայանի վերակառուցումն անդրադառնում է նաև այրիանոցի վրա: Այրիանոցում ապաստան գտած կանանց համար տարեկան 15 լիրայով (300 մարկ) վարձակալվում է մի նոր շենք, որը ստանում է «Բետհեսդա» անվանումը: Շինությունն ուներ 6 սենյակ, երկու խոհանոց, երկու նկուղ, երկու նախասենյակ և փոքրիկ այգի: Տանը կանանցից բացի ապրում էր նաև մի տղա՝ առօրյա գործերի համար: Այրիներից երկուսն ապրում էին որբանոցում և մասնակցում ամենօրյա աշխատանքներին[33]:

Քանի որ ինչպես Մեզրեում, այնպես էլ դրա շրջակայքում մեծ տարածում ունեին վարակիչ զանազան հիվանդությունները՝ դիզինտերիա, տիֆ, մալարիա, կարմրուկ, քութեշ և այլն, որոնց արդյունքում հաճախակի էին մահացության դեպքերը, և, առհասարակ, բժշկական միջամտության կարիք հաճախակի էր զգացվում, որոշվում է հիվանդանոց հիմնել: Սկզբնական շրջանում վարձակալված տներից մեկում հիվանդանոց է կահավորվում Լաուրա Մյոհրինգի ղեկավարության ներքո, սակայն բժշկական լուրջ միջամտություններն իրականացվում էին դր. Միքայելի կողմից[34]:

1902 թ. կառուցվում է հիվանդանոցի նոր ու ժամանակակից շենք: Նորակառույց հիվանդանոցին տրվում է «Գերմանական Եփրատ հիվանդանոց Միլոահ» անվանումը: Դրան կից գործում էր նաև դեղատուն: Հիվանդանոցը ղեկավարելու համար 1902 թ. դեկտեմբերի 16-ին Գերմանիայից Մեզրե է ժամանում դր. Հոտհը և իր ուսերին վերցնում բժշկական առաքելության հիմնական ծանրությունը[35]:

1903–1905 թթ. Մեզրեի կայանն ուներ հետևյալ «տեսքը». աշխատակիցներ՝ Էհման ամուսիններն իրենց երեք երեխայով, դր. Հոտհը և նրա կինը, Պալենտինատ ամուսինները, միսիոներուհիներ Լաուրա Մյոհրինգը, Վերենա Շմիդլին, Պաուլինե Վիլանդը, Կատհարինե Մադերը, Յուլի Անդերսենը, Քրիստիանե Լոյբեխերը, Քրիստա Համերը, Ալմա Յոհանսոնը: Ընդհանուր առմամբ, կայանում աշխատում էր նաև 12 գերմանացի և 2 սկանդինավցի աշխատակից, 8 հայ ուսուցիչ և ուսուցչուհի, 9 հայ «մայրիկ» և այլն: Կայանում ապրում էր 572 որբ, որից 262 տղա՝ տեղակայված 2 որբանոցում և 310 աղջիկ՝ 3 որբանոցում: Խնամակալության տակ էր գտնվում 35 կույր և այրի: Ավելի էին լավացել կայանի շենքային պայմանները: Տղաների և աղջիկների որբանոցի 5 շենքերից բացի կային նաև աղջիկների համար դպրոցի շենք, նորակառույց հիվանդանոց, հանգստյան տուն լեռներում, կարի, մանածագործության և կոշկակարության արհեստանոցներ[36]:

Որբախնամ, այրիախնամ, բժշկական ու կրթական աշխատանքներից բացի, ելնելով բողոքական եկեղեցու շահերից, կայանն իրականացնում էր նաև կրոնաքարոզչական գործունեություն:

---

[33] "Mitteilungen aus dem Orient". Frankfurt a. M., Heft 12, September, 1903, S. 183.

[34] "Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient". Frankfurt a. M., Heft 10, Juli, 1901, S. 116 –117.

[35] "Mitteilungen aus dem Orient vom Deutschen Hülfsbund für christliches Liebeswerk im Orient". Frankfurt a. M., Heft 6, März, 1902, S. 62; Heft 4, Januar, 1903, S. 52.

[36] "Mitteilungen aus dem Orient". Frankfurt a. M., Heft 8 und 9, Mai und Juni, 1903, S. 120–121, 129–132.

Մինչև գերմանացիների՝ տեղացիների ավետարանականացմանն ուղղված գործունեություն ծավալելը, Մեզրեում արդեն իսկ գոյություն ուներ բողոքական համայնք, և 1887 թ. ի վեր գործում էր բողոքական մի եկեղեցի՝ հիմնված ամերիկյան առաքելության կողմից[37]: ՕԱԼԱԽ-ը Մեզրեի շրջանում իր աշխատանքները սկսել էր դեռևս 1852 թ., իսկ առաջին միսիոներն էլ Ջորջ Վաշինգտոնն էր[38]: Գերմանացիների մուտք գործելուց առաջ այստեղ գործում էին ութ ամերիկացի միսիոներ, ովքեր ունեին տեղացի 78 աշխատակից: 1896 թ. տվյալներով՝ Խարբերդի գավառում, նախքան գերմանական առաքելության հաստատվելը, կար 5679 բողոքական, իսկ տեղի կրթական հաստատություններում սովորում էր 2632 երեխա[39]:

Մեզրե-Խարբերդի շրջանի բնակիչներն ավելի հանդուրժող էին տարբեր դավանանք ունեցողների նկատմամբ, քան մյուս վայրերի բնակչությունը: Սա արդյունք էր թե՛ արդեն իսկ քաղաքում և շրջակայքում առկա բողոքականների ոչ նվազ քանակի և թե՛ այն բանի, որ ամերիկյան բողոքական միսիոներների երկարամյա գործունեության ընթացքում տեղի ազգաբնակչությունն ավելի կրավորական կեցվածք էր ընդունել կրոնական տարբեր դավանությունների («յարանուանությունների») նկատմամբ: Ասվածը հաստատում է նաև կայանի հիմնադիր Յո. Էհմանը, երբ բացատրում է, թե ինչու էր հենց Մեզրեն ընտրվել միսիոներական կայանի հիմնադրման համար նպաստավոր վայր. «Մեզրեն մեր աշխատանքի համար հատկապես նպատակահարմար գտնվեց, քանի որ տեղի ազգաբնակչությունը մեր գործին մեծ ըմբռնումով ընդառաջ եկավ և իր բողոքական համայնքի ջերմ հետաքրքրվածությամբ պահանջված դարձրեց, ինչն այլ վայրերում այդ չափով չէր լինի: Նման կայանի հիմնման համար իսկապես շատ կարևոր է, որ տեղում մի շրջանակ լինի, որն իր հետաքրքրվածությամբ և միջնորդությամբ այն պահանջված կդարձնի»[40]:

Այն, որ միսիոներական գործունեությունն ընդհանրապես, իսկ ՀՕԳՄ-ի Ֆրանկֆուրտի կոմիտեի գործունեությունը Մեզրեի շրջանում ունեցել է շատ դրական դրսևորումներ՝ ի դեմս կրթական, բժշկական, ֆինանսական աջակցության, աշխատելու հնարավորության ընձեռնման և, հատկապես, այրիների ու որբերի խնամակալության, կասկածից վեր է: Սակայն այն ունեցել է նաև իր բացասական ազդեցությունը՝ առաջին հերթին տեղի ազգաբնակչության ավետարանականացման ուղղությամբ տարված աշխատանքների առումով: Այն բանից հետո, երբ ՀՕԳՄ-ն արդեն հիմնավորվել էր Մեզրեում, նրա գործունեությունն սկսում է ավելի համապատասխանել «առաքելություն» բառին, այն է՝ գործունեություն է ծավալում տեղի բնակիչներին, այդ թվում՝ առավելապես հայերին ավետարանականացնելու ուղղությամբ:

ՀՕԳՄ-ի առաքելությանը բավականին հեշտ է տրվում առկա տեղի բողոքական համայնքի հետ հարաբերությունների հաստատումն ու զարգացումը: Այդ հարաբերությունների ավելի ջերմացումից ու Մեզրեի բողոքական

---

[37] *Թ. Հ ա կ ո բ յ ա ն և այլք. նշվ. աշխ., էջ 754:*
[38] *Վ. Հ ա յ կ. նշվ. աշխ., էջ 322:*
[39] H a n s - L u k a s K i e s e r. *Նշվ. աշխ., էջ 204:*
[40] J. E h m a n n. *Նշվ. աշխ., էջ 11:*

համայնքի մեծացումից հետո 1903 թ. Մեզրեում գերմանացի միսիոներների և բողոքական համայնքի ջանքերով կառուցվում է մի նոր ավետարանական եկեղեցի[41]: Դրա հիմնադրումն իրականացվել է նաև պատվելի Կիրակոս Խաչատուրյանի ջանքերով[42]:

Բ. Ժամկոչյանը գրում է, որ Մեզրեի կայանի հիմնադիր Յո. Էհմանը չի մտածել բողոքական եկեղեցի հիմնելու մասին, այլ պահել է հայկականը, երբեք չի քաջալերել սաների և ժողովրդի բողոքական դառնալը և այլն[43]: Այս կարծիքը, սակայն, մեղմ ասած, դժվար է կիսել: ՀՕԳՄ-ի 25 ամյակի կապակցությամբ հրատարակված գրքում որպես առաքելության նպատակ է նշվում հենց աշխատանքի՝ համընդհանուր հավանության արժանանալու պայմանը, ինչը, ըստ էության, Հիսուսի համար հոգիներ նվաճելու համար էր[44]: Եվ քանի որ առաքելությունն առավելապես գործում էր հայերի շրջանում, ովքեր դեռևս 301 թվականին ընդունել էին քրիստոնեությունն արդեն իսկ որպես պետական կրոն՝ դրանով իսկ «գտնելով Հիսուսին», ստացվում է, որ գերմանացի միսիոներների նպատակը հիմնականում առաքելական հայերին «դարձի բերելն» էր, այն է՝ ավետարանականացնելը: Այնուամենայնիվ, դա չէր սահմանափակվում միայն հայերով: Փորձ էր արվում մուսուլմաններին ևս ներգրավելու ավետարանականացման գործընթացի մեջ: Այսպես, 1909 թ. Մեզրեում տեղի են ունենում ավետարանականացման մեծ հավաքույթներ, որոնց մասնակցում են նաև թուրքեր[45]:

Այսպիսով, միանշանակորեն ընդունելով ՀՕԳՄ-ի կողմից Մեզրեում և նրա շրջակայքում ծավալած գործունեության մի շարք դրական կողմերը՝ ի դեմս որբախնամ, այրիախնամ աշխատանքի, բժշկական, կրթադաստիարակչական գործունեության և այլն, պետք է նաև նշել, որ առաքելությունն ունեցել է խիստ բացասական դրսևորումներ: Դրանցից, թերևս, ամենաակնհայտը նրա կրոնական գործունեությունն էր, ավելի հստակ՝ ավետարանականացումը:

ОСНОВАНИЕ «НЕМЕЦКОГО СОЮЗА ПОМОЩИ АРМЯНАМ» И ЕГО ПЕРВЫЕ ШАГИ В МЕЗРЕ (1897–1908 гг.)

АЙК МАРТИРОСЯН

Р е з ю м е

В конце XIX века в Германии возникло проармянское движение как результат гамидовских погромов. Ведущей силой движения большей частью являлись религиозные круги и имеющие к ним

[41] *Նույն տեղում, էջ 5:*

[42] *Բ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 24:*

[43] *Նույն տեղում, էջ 252:*

[44] Die Evangelisationsarbeit des Hülfsbundes; in 25 Jahre im Orient: 1896–1921. Ein Gang durch die Arbeit des Deutschen Hülfsbundes für Christliches Liebeswerk im Orient. F. Schuchardt, Frankfurt a. M., 1921, S. 144.

[45] F. S c h u c h a r d t. Kurze Chronik der Hülfsbundarbeit; in 25 Jahre im Orient: 1896–1921. Ein Gang durch die Arbeit des Deutschen Hülfsbundes für Christliches Liebeswerk im Orient. Frankfurt a. M., 1921, S. 93.

отношение СМИ. При их помощи и участии 2 июля 1896 года был основан «Немецкий союз помощи армянам». Союз начал свои действия с заботы о сиротах и вдовах, решения их медицинских и образовательных проблем во многих регионах Османской империи, где проживало много армян, включая Мезре. Наряду с этой работой, миссия также проводила политику прозелитизма – распространяла евангелизм среди армян.

THE FOUNDATION OF "THE GERMAN UNION FOR ARMENIAN AID" AND ITS FIRST STEPS IN MEZRE (1897–1908)

HAYK MARTIROSYAN

S u m m a r y

At the end of the 19th century pro-Armenian movement was originated in Germany as a result of the Hamidian massacres. The driving force of the movement were mostly religious circles and the related media. With their help and participation "The German Union for Armenian Aid" was founded on July 2, 1896. The Union started activities of caring about orphans and widows, solving their medical and educational problems in many places of the Ottoman Empire where many Armenians lived, including Mezre. Along with this work the mission also pursued a policy of proselytism, i.e. spreading evangelism among the Armenians.